Հարգելի ներկաներ,

Հայկական գրադարանների համաժողովն այլևս կայացած իրողություն է: Այսօրվա երրորդ ներկայացուցչական հանդիպումը ասվածի ապացույցն է: Մեր կյանքը հարուստ է կարևոր հոգևոր-մշակութային, պատմական իրադարձություններով, հոբելյաններով, որոնց նախորդող ու հաջորդող հանդիսությունները հաճախ տոնի են վերածվում, նաև նախանշում առաջնահերթ ծրագրեր, համախմբում մեր ցանկություններն ու հնարավորությունները, վերածվում առկա համահայկական մշակութային խնդիրները լուծելուն նպատակաուղղված շահագրգիռ համագործակցության հարթակների: Այս առաքելությունն ունեցավ նաև Հայ տպագրության 500-ամյակի հոբելյանական ծրագիրը և տեղեկատվական հակամարտությունների պայմաններում իրագործված միջոցառումները ընձեռնեցին հայոց գերակա արժեքները վերագնահատելու, տարածելու, հանրահռչակելու, պատմական իրողությունները մեկ անգամ ևս հաստատագրելու անփոխարինելի հնարավորություններ:

Պատահական չէ, որ Հայկական գրադարանների համաժողովը գումարվում է Գրադարանավարի օրվան գրեթե զուգընթաց: Մեզ համար գրադարանները պատմական հիշողության, ազգային հավաքական արժեքների պահեստարաններն են, իսկ հանձնառու և իրենց գործին նվիրված գրադարանավարները այս արժեքները հավաքող, պահպանող, տարածող ու վերարտադրող անհատներն են:

2015-ի ապրիլը՝ հայ ժողովրդի եղերական ողբերգությունը խտացնող 100-ամյակի տարելիցը մոտենում է և առաջիկա ամիսներին բազում կարևոր խնդիրներ ենք իրագործելու. կանխելու ենք պատմությունը սրբագրելու բոլոր ձախավեր փորձերը, մեկ հարկի տակ ենք համախմբելու մեր հոգևոր ու բարոյական, մտավոր ու գիտական ներուժը, առաջնորդվելով «Առանց անցյալի չկա ապագա, առանց հիշողության չկա նպատակ ու ծրագիր» կարգախոսով՝ աջակցելու ենք քաղաքացիական առողջ ու համամարդկային բոլոր դիրքորոշումներն ու դրսևորումները: Գրադարաններում այսօր ծավալվել է պատմության վկայությունները, վավերագրերը, փաստաթղթերը թվայնացնելու և հանրայնացնելու խրախուսելի աշխատանքները, ինչը կարևորագույն քայլ է Հայոց պահանջատիրության վերանորոգ շարժումը մշտաբորբ պահելու, աշխարհին ներկայացնելու ու հիմնավորելու գործում: Այս առաքելությունն արդյունավորելու համար գրադարաններն ու գրադարանավարները շատ անելիք ունեն:

ՀՀ Մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյան